

**PROCEEDINGS OF THE YEREVAN STATE UNIVERSITY**

---

---

*Physical and Mathematical Sciences*

№ 3 (241), 2016

Ակադեմիկոս Էդուարդ Չուբարյանի 80 ամյակին

Էդուարդ Վարդանի Չուբարյան. գիտնականը, ուսուցիչը և գիտության կազմակերպիչը  
էջ 3–5

*Ալավերդյան Ա. Գ.* Տարօրինակ, տաք քվարկային նյութի ազատ մակերևույթի  
բնութագրերը  
էջ 6–10

*Ավագյան Ռ. Մ., Հարությունյան Գ. Հ., Սուշկով Ս. Վ.* Վաղ տիեզերքի հնարավոր  
ինֆյացիոն նորեկ մասին  
էջ 11–14

*Հակոբյան Տ. Ա., Ներսեսյան Ա. Պ.* Կալոջերոյի փոխազդեցությամբ Կուլոնյան  
համակարգերը  
էջ 15–19

*Դալբախչյան Հ. Յ., Դազարյան Է. Մ., Սարգսյան Հ. Ա.* Պարաբոլական սահմանա-  
փակող պոտենցիալով գլանային քվանտային կետի դիամագնիսականությունը  
էջ 20–24

*Խուդավերդյան Հ. Մ., Պեղիե Մ.* Կենտ համաշափ թեմզորները և Լև-Զիլիտայի  
կապակցվածության համանմանը կենտ սիմպլեկտիկ սուպերբազմաձևության  
համար  
էջ 25–31

*Պողոսյան Հ. Ռ., Սարգսյան Գ. Ա.* Սիածուլման մատրիցան  $N=1$  սուպեր Լիուվիլի  
տեսությունում  
էջ 32–36

*Սահարյան Ա. Ա., Քորամշյան Ա. Ա., Սահարյան Ա. Ա.* Կազիմիրի էլեկտրա-  
մագնիսական խտությունները թիթեղի համար անտի դե Սիտերի  
տարածածանանակում  
էջ 37–41

*Սեղրակյան Ա. Դ.* Հիմքերոնային և միջուկային նյութը կոմպակտ աստղերում  
էջ 42–46

*Սեղրակյան Դ. Մ., Հայրապետյան Մ. Վ., Բաղդասարյան Դ. Ա.* Տարօրինակ աստղերի  
մագնիսական դաշտը  
էջ 47–51

**ՀԱՄԱՌԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ**

**ՍԱՐՑԵՍԱՏԻԿԱ**

*Հակոբյան Տ. Ա.* Տրանզիստիվ գերճույնությունները կիսախմբերում  
էջ 52–55

Հոդվածում նկարագրված են բոլոր այն կիսախմբերը, որոնցում  
 $X(X(x,y), X(y,z)) = X(x,z)$  տրանզիստիվության գերճույնությունը տեղի ունի

բազմանդամային ձևով (այդպիսի կիսախմբերը կոչվում են հիպերտրանզիտիվ): Մասնավորապես ցույց է տրված, որ յուրաքանչյուր տրանզիտիվ կիսախումբ (այսինքն՝  $xy^2z = xz$  նույնությանը բավարարող կիսախումբ) հիպերտրանզիտիվ է:

**Խոշատրյան Ա. Գ. Մածուցիկ սեղմող հեղուկի շարժման հավասարումների համար լոկալ գոյության թեորեմ հոլդերյան կշռային դասերում** էջ 56–62

Աշխատանքում ապացուցվում է մածուցիկ, սեղմվող հեղուկի շարժման հավասարումների համար լոկալ գոյության թեորեմ կշռային հոլդերյան դասերում:

**Թումանյան Ա. Գ. Սորոլկի անիզոտրոպ կշռային տարածություններում դիֆերենցիալ օպերատորների նյուտերյանության և ինդեքսի մասին** էջ 63–69

Աշխատանքում հետազոտվում է նյուտերյանությունը և ինդեքսը Սորոլկի անիզոտրոպ կշռային տարածություններում  $\mathbb{R}^m$ -ում: Ստացված են բավարար պայմաններ կշռային տարածություններում նյուտերյանության պահպանման համար և բավարար պայման կիսաէլիպտիկ օպերատորի ինդեքսի գրոյին հավասար լինելու համար:

**Յովդաշեն Տ. Կ. Ուղղանկյան մեջ մի խառը տիպի մասնակի ածանցյալներով հավասարման ոչ լոկալ խնդրի մասին** էջ 70–78

Դիտարկված են, ինտեգրալ պայմաններով ոչ լոկալ խառը տիպի մասնակի ածանցյալներով խնդրի լուծելիության և լուծումների կառուցման հարցերը: Օգտագործված է փոփոխականների բաժանման վրա հիմնված սաբէկտրալ եղանակ: Որոշված է դրվագ խնդրի միանշանակ լուծելիության շափորոշիչ: Ուսումնասիրված է նաև լուծումների գոյությունը լուծման միակության պայմանի խախտման դեպքում:

## ՄԵԽԱՆԻԿԱ

**Մարգարյան Ա. Վ. Եռաչափ ալիքները առանց շփման երկու առաձգական միջավայրերի բաժանման եզրում** էջ 79–83

Դիտարկվում է Ստոռունիի մակերևությային ալիքների գոյության հարցը եռաչափ դրվագքով: Երկու կիսատարածությունների բաժանման եզրում տրված են պայմաններ, որոնք համապատասխանում են առանց շփման կոնտակտին: Պոտենցիալ ֆունկցիաների ներմուծմամբ, հարթ դեֆորմացիայի դեպքի նման, խնդրի հետազոտությունը պարզեցվում է: Ստացված է

բնութագրիչ հավասարում մակերևութային ալիքների փուլային արագության նկատմամբ, որի համար դիտարկված են մասնավոր դեպքեր:

### ՖԻԶԻԿԱ

**Սահակյան Խ. Ս. Մետաղական ճեղքային մակերևութային պլազմոնի անդրադարձման անալիտիկ նկարագիրը** Եջ 84–91

Դիտարկվում են ճեղքային մակերևութային պլազմոնի տարածման հատկությունները մետաղում բացված ենթաալիքային ճեղքում: Ստացված տեսական մոդելը թույլ է տալիս անալիտիկ կերպով դրւու բերել բանաձևեր, որոնք նկարագրում են ճեղքային պլազմոնի անդրադարձումը և անցումը կիսաանվերջ ճեղքի կամ կիսաանվերջ ճեղքերի պարբերական համակարգի ազատ եզրերից: Այս բանաձևերի օգնությամբ հաշված է ճեղքով և պարբերական համակարգով հզորության փոխանցման էֆեկտիվությունը: Եթե ճեղքի լայնությունը ( $d$ ) շատ փոքր է ընկնող ալիքի երկարությունից, հզորության փոխանցման էֆեկտիվությունը փոփոխվում է  $d^{3/2}$  օրենքով, այլապես կախումը գծային է: Միևնույն ալիքի երկարության դեպքում պարբերական համակարգով անցած հզորության հարաբերությունը միաժեղք համակարգով անցած հզորությանը որոշվում է ճեղքերի պարբերությամբ: Ստացված բանաձևերը հանդիսանում են մաթեմատիկական մեխանիզմ ճեղքային պլազմոնային միկրոռեզոնասորային համակարգերի ուղղուանսային երկարությունների, կորուստների և բարորակության տեսական գնահատականի համար և կարող են օգտագործվել որպես նախնական ուղեցույց այսպիսի համակարգերի նախագծման ժամանակ: